ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2024թ. № **103-Ա**

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18062024-06-0021 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք., Ա. Մանուկյան փողոց, 2-րդ փակուղի, 2/2 հողամաս» հասցեում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0235-0002 կադաստրային ծածկագրով 0,38536 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, պահեստ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 4 705 245,6 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

ԿՈՂՄ (12)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (3)
ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ		ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ		ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ		ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿՈՂՄ (12) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (3)

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 8
ք. Սպիտակ